

ՔԱՐՈԶ

ՀԱՅՐԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ

(Խոսված Մայր Տաճարում, նուիվարի 14-ին)

«Նա մկրտեսցէ զձեզ Հոգւով Սրբով և հրով»
(ՅՈՎՀ., Գ 16)

Մկրտությունը քրիստոնեական կրոնի հնագույն և կարևոր խորհուրդներից մեկն է, հանդիսանում, կապված Քրիստոսի մկրտության պատմական դեպքի հետ։

Քրիստոնեությունից առաջ հրեաների մոտ ևս կար Հին Ուխտում մկրտությունը, որը սակայն տարբեր բովանդակություն և իմաստներ։ Մկրտում էին Հին Կտակարանի մարգարեները և մկրտությունն ընդհանրապես կապվում էր կրոնական արտարին արարողությունների հետ։

Քրիստոնեության արշալույսին ևս Հովհաննես Մկրտիչը մկրտում էր շատերին ջրով՝ «վասն ապաշխարութեանն. «Աստուած առաքեաց զիս մկրտել ջրով) (Յովհ., Ա 33)։ Բայց Հովհաննես Մկրտիչը վկայություն էր տալիս նաև Ս. Հոգով կատարվելիք մկրտության մասին «վասն մեղաց», Քրիստոսի կողմից։ Հովհաննես Մկրտչին հարց էին տալիս. «Եթէ դու չես Քրիստոսը կամ Եղիան կամ մի մեծ մարգարէ, ինչո՞ւ ես մկրտում» (Յովհ., Ա 25)։ Նա պատասխանում էր. «Ես մկրտեմ զձեզ ջրով, բայց Նա... մկրտեսցէ Հոգւով Սրբով և հրով» (Ղուկ., Գ 16)։ Արդարև Քրիստոս եկավ բովանդակ մեղավոր մարդկությունը մկրտել «Հոգւով Սրբով և հրով։ Ով Նրան հավատում էր, մկրտվում էր, սրբվում սկզբնական մեղքերից, դառնում էր նորակազմ Քրիստոնեական Եկեղեցու անդամ։ Մկրտության խորհրդի միջոցով ապրում և ամրապնդվում էր Եկեղեցին։ Մկրտությունը դարձավ այն ոսկե նախադուռը, որով միայն ամեն մի հավատացյալ կարող էր մտնել քրիստոնեական նոր տունկ, բուրումնալից ծաղկանոցը։ Մկրտությունը դարձավ քրիստոնյա լինելու առաջին պայման, կարևոր անհրաժեշտություն՝ հին զգեստներից մերկանալու և նոր զգեստներ հագնելու։ Մկրտում էին միայն նրանց, որոնք հավատում էին Մեսիային, Նրա Աստված լինելուն։ Արդարև, առանց հաստատուն հավատքի ի Քրիստոս Հիսուս, ո՛չ մի փոփոխություն չի կարող կատարվել քրիստոնյայի կյանքում։ Ահա թե ինչու ամեն մի մկրտվողին նախապես տրվում էր հետևյալ հարցումը. «Հավատո՞ւմ ես Հիսուս Քրիստոսին...»։

Մկրտությամբ կազմավորվեց և ամրապնդվեց Քրիստոսի Եկեղեցին։ Հիսուս Ինքն ևս մկրտվեց, որինակ հանդիսանալով բոլոր Իրեն հավատացողներին ու հետևողներին, բոլոր ժամանակների և դալիք սերունդների համար։

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու համար ևս միրոնօրհնությունը մի առանձնահատուկ նշանակություն ունի։ Միրոնօրհնությամբ սրբվում ենք հին մեղքերից և դառնում որդեգիր Աստծուն և ժառանգորդ երկնից արքայության, ծնվում ենք նորից Ս. Եկեղեցու արգանդից, որ մկրտության սուրբ ավազանն է։

Այս տեսանելի և շոշափելի երևույթներին զուգընթաց մեր հավատքի համար կատարվում են այսպես անտեսանելի խորհուրդը, ներ. Մենք հավատում ենք, որ սուրբ ավազանում մկրտվելու, Ս. Միռոնի դրոշմն ու սրբությունն ընդունելու ժամանակ Աստված մեր նյութեղեն մարմնի մեջ սերմանում է Իր Հոգու շնորհները, երկնային սրբության մի կայծ վառում մեր սրտում։ Մենք հավատում ենք, որ երեխայի հասակի հետ միասին մանանեխի պես ծլում ու ծառեր են դառնում այդ հոգևոր սերմերը և նա աճում է քրիստոնեական լրիվ հավատքի կյանքով։ Սակայն այդ բոլորը, աճելու և բազմանալու ընթացքը, չի կատարվում ինքնաբերաբար, անկախ մեզանից և կամ լոկ արտաքին նյութերի ազդեցությամբ, այլ մանավանդ մեր ամենօրյա հավատքի կյանքով, մեր անխոնջ ջանքերով ու համառ աշխատանքով։ Բնականաբար սխալ է կարծել, թե մկրտել տալով երեխաներին, ծնողները ամեն ինչ անում-վերջացնում են, լիովին կատարում իրենց պարտականությունը։ Սակայն, ընդհակառակը, դրանով ծնողները կանգնում են նոր, ավելի մեծ պարտականությունների ու պատասխանատվության առջև։ Աստված շատ նախանձախնդիր է իր բաշխած մարգարիտների համար։ Հոգևոր կյանքում կանգառներ չկան. ով հոգեպես չի աճում, չի զարգանում, նա կմահանա, կկորցնե նրա հոգին։ Բավական չէ Աստծուց շնորհներ ստանալը, էականը դրանք աճեցնելն ու բազմացնելն է։ Աստված ոչինչ չի տալիս մեզ ձրիաբար, որպեսզի չմեռցնենք մեր մեջ աշխատասիրության, պայքարի և առաջադիմության սուրբ և առաքինի ձգտումները, առանց որոնց մեր կյանքը կլիներ դատարկ, անհետաքրքիր։ Դեռ ավելին, բավական է ցուցաբերենք որոշ անտարբերություն, ծուլություն, որպեսզի ոչ միայն այլևս ոչինչ նոր չստանանք, այլև ունեցածն էլ կորցնենք։ Այս շատ բնական է և հասկանալի, եթե ծառը շարունակ ջրենք և անհրաժեշտ խնամքը չտանք նրա համար, այն աստիճանաբար կչորանա և պտուղ չի տա։ Այսպես է նաև հոգևոր, բարոյական կյանքում. ով չի առաջադիմում, նա ետ կգնա։ Առավել ևս հարկավոր է ամեն տեսակ հոգ տանել՝ աճեցնելու և բազմացնելու մեր հոգևոր շնորհները, որ ստացել ենք մկրտությամբ և այլ առիթներով։ Աստված ուզում է, որ Իր ցանածները կանաչեն և ծաղկեն, որ մարդը դառնա կատարյալ, մեծ մարդ կոչման վեհ բարձրության վրա, որպես որդի և ժառանգ Աստծու։

Մեր կյանքում, մենք մեկ անգամ ենք մկրտվում եկեղեցու ավազանում, որովհետև մի է մկրտությունն և անկրկնելի՝ ըստ եկեղեցու դավանանքի։ Բայց այդ նշանակում է, որ մկրտված քրիստոնյան ամեն օր պետք է ապրի հավատքով, այդ հավատքով անդուլ աշխատանքի ու պայքարի ազնիվ գաղափարների, ազնիվ գործերի ու նպատակների համար։ Այդ նշանակում է՝ միշտ ջանալ բազմացնել մեր մեջ Ս. Հոգու շնորհները, ապրել նրանցով և մեզ առաջնորդել դեպի հոգևոր ու մարմնավոր կատարելությունը։ Ճիշտ է, մենք ջրով մեկ անգամ ենք մկրտվում և սրբվում մեղքերից, բայց Ս. Հոգով լցվում ենք ամեն անգամ, երբ խոստովանում ենք և ստանում Ս. Հաղորդություն, լցվում ենք սուրբ մտքերով ու գաղափարներով, սուրբ գործերով ու սուրբ վարքով։ «Նա մկրտելու է ձեզ ոչ միայն ջրով, այլև Ս. Հոգով և կրակով»։

Այսպիսով, մենք հաղորդվելով, Ս. Հոգու նորանոր շնորհներն ենք ստանում։ Մեր սուրբ և սեպուհ պարտականությունը պետք համարենք մեր խղճի, մարդկության և Աստծու առջև, ըստ ամենայնի բազմապատկելու այդ հոգևոր քանքարները, մեր երեխաների, մեր քույրերի ու եղբայրների, մեր ընկերների, ինչպես և մեր մեջ զարգացնել ազնիվ հոգի. հավատք, կամք, առաքինություններ, սեր դեպի Աստված, սեր դեպի ծնողներն ու ընկերները, սեր դեպի աշխատանքն ու ուսումը, սեր դեպի հարազատ ու քաղցր Հայրենիքը, սեր դեպի այն ամենը, ինչ լավ է, ազնիվ, արդար։

«Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ»։ Այս նվիրական օրերին թող Ճշմարտության, խաղաղության, սրբության Հոգին իջնի մեր բոլորի վրա, որպեսզի բոլորս էլ լինենք մաքրված կենդանի տաճարներ մանկացյալ Աստվածորդու համար։ Ամեն։